# Լ Ր Ա Ց Ո Ւ Ց Ի Չ   Օ Ր Ա Կ Ա Ր Գ

## ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նիստի (N 6)

6 հունիսի 2014թ. ժամը 15⁰⁰

1. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Հաղարծին վանական համալիրի միաբանական շենքի կառուցում»ծրագրի մասին:

(Արմեն Գրիգորյան)

2. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի տրամադրում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի յոթ համայնքներին» ծրագրի մասին:

(Վարդան Իվանյան)

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին քաղաքի «Գարեգին Ավդալյանի» անվան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզադահլիճի հատակի վերանորոգում» ծրագրի մասին:

(Գագիկ Պողոսյան)

4. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի տրամադրում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի վեց համայնքներին» ծրագրի մասին:

(Գագիկ Պողոսյան)

5. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի տասնյոթ նախադպրոցական հաստատությունների և մանկապարտեզների մանկավարժների վերապատրաստում» ծրագրի մասին:

(Գագիկ Պողոսյան)

### 6. Բարեգործական բեռների ներմուծման և բաշխման մասին

(Արման Բարխուդարյան)

6.1 Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով բեռի ներմուծման ծրագրի մասին:

6.2 Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի հասցեով ուղարկված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին:

6.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին **N 1** (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն):

6.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաս-



տատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին **N 2** (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն):

6.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին **N 3** (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն):

6.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն):

6.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի N Մ-809-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին **N 2** («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ):

6.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայակական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ):

6.9 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռների մասին **N 1** («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր):

6.10 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի N Մ-774-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ):

### 7. Հաստատված բարեգործական ծրագրերին հարակից գործարքների մասին

(Արման Բարխուդարյան)

7.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-106-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ):

7.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-945-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ):

7.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-945-Ա որոշմամբ հաս-

տատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ):

7.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-094-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ):

7.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի N Մ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

7.6 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ):

7.7 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 17-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 (Հայաստանի մանուկների հիմնադրամ):

7.8 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ):

## 8. Այլ հարցեր

8.1 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 22-ի N Մ-753-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու մասին (Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմ):

8.2 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N Մ-1166-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ):

8.3 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N Մ-1169-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ):

8.4 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N Մ-1170-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ):



8.5 Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-453-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ):

*ՆԱԽԱԳԻԾ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**_____ հունիսի 2014 թվականի N Մ- -Ա** 6/1

**քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՂԱՐԾԻՆ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի-ի N 3/3.8-1/, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 02/ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի -ի N ՎՄ/3-4/, եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի կողմից իրականացվող՝ 669,943,330 դրամ արժողությամբ «Հաղարծին վանական համալիրի միաբանական շենքի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Շիրակ ինժեներինգ Քոնստրաքշն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05531764) 2014 թվականի մայիսի 6-ին կնքված N 03Շ/014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հաղարծին վանական համալիրի վերակառուցման և վերականգնման 3-րդ փուլի՝ միաբանական շենքի կառուցման աշխատանքների իրականացում՝ 669,943,330 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին և Դիլիջանի քաղաքապետին:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ
ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«29» 05 2014 թ.

Հաղարծին վանական համալիրի Միաբանական շենքի կառուցում 6/1

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է իրականացնել Հաղարծին վանական համալիրի վերակառուցման և վերականգնման աշխատանքները: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործ (բարեգործները) | Հայ Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, ՀՎՀՀ 05531764 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Տավուշի մարզ, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 669,943,330 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 06 մայիս 2014թ. – 01 նոյեմբեր 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի նպատակն է իրականացնել Հաղարծին վանական համալիրի վերակառուցման և վերականգնման աշխատանքները ՝ 669,943,330 ՀՀ դրամ գումարով:<br>Աշխատանքներն իրականացվում է՝ «Շիրակ ինժեներինգ Քոնստրաքշն» ՓԲԸ-ի (ՀՀ, ք. Գյումրի, Մուսայելյան 76Ա, բն. 12, ՀՎՀՀ 05531764) կողմից, պայմանագիր՝03Շ/014, կնքված 06.05.2014թ, 669,943,330 ՀՀ դրամ գումարով:<br>Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 06 մայիս 2014թ. – 01 նոյեմբեր 2014թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է կատարել Հաղարծին վանական համալիրի վերակառուցման և վերականգնման աշխատանքները /Միաբանական շենքի կառուցում/ ՝ 669,943,330 ՀՀ դրամ գումարով ՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցությունԴիլիջանի քաղաքապետարանի և Տավուշի մարզի մարզպետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

N: ՎՄ/3-3/6697-14   ձր. 6/1
4.06.2014թ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 30.05.2014թ. թիվ 15/15.8/8282-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Հաղարծին» վանական համալիրի միաբանական շենքի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳՄՀՄ բաժին, հեռ. 060 544648

044/16483-14

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր   Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

ձր. 6/1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

4.06.2014թ № 3/3.8-2/8449-14

Ձեր № ____________________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 30.05.2014թ. N 15/15.8/8282-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Հաղարծին վանական համալիրի միաբանական շենքի կառուցում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

034/16618-14

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Մ. 6/1

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385*
*էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

02/3693-14

04.06.2014թ.

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2014թ. մայիսի 30-ի**
**15/15.8/8282-14 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Հաղարծին վանական համալիրի միաբանական շենքի կառուցում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**
**Ա. Ստեփանյան, հեռ՝. 380-227**

035/16647-14

04.06.2014թ.

<u>**ՆԱԽԱԳԻԾ**</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**մայիսի 2014 թվականի N Մ- -Ա** Մ. 6/2

**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՅՈԹ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 3/3.8-1/ -14, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 3/3.8-1/ -14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 02/ -14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 02/ -14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի մայիսի -ի N ՎՄ/3-4/ -14 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի 2014 թվականի մայիսի -ի N 02/ -14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 4,417,595 դրամ ընդհանուր արժողությամբ «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի իննը համայնքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԼԻԱՔԱՐ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09412694) 2014 թվականի ապրիլի 22-ին կնքված N WVA/KAP ADP/CM-14/001/LOT 1/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 4,417,595 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

դր 6/2

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ"
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի տնօրենի ժ.պ.՝
Շաքիկ Մարուխյան
«26» մայիսի 2014թ.

«Շինարարական նյութերի մատակարարում ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի յոթ համայնքներին»
Ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Աջակցել եղեգ համայնքի միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի և ռազմագիտության առարկաների դասավանդման որակի բարելավմանը, Սյունիք համայնքի միջնակարգ դպրոցի աշակերտական խորհրդի սենյակի վերանորոգմանը, Կապանի թիվ 4 և Դավիթբեկ համայնքի մանկապարտեզների մասնակի վերանորոգմանը, Եղվարդ համայնքում ջերմոցային տնտեսության հիմնմանը, Վ.Խոտանան համայնքի խմելու ջրի աղբյուրների ցանկապատմանը, Անտառաշատ համայնքի հանդիսությունների սրահի բարեկարգմանը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | «Վորլդ վիժն ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Շվեյցարիայի աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ Kriesbachstrasse 30, 8600 Dubendorf, Switzerland (Tel.: +41 44 510 1515) |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրն են ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի Եղեգ, Սյունիք, Եղվարդ, Վ. Խոտանան, Կապան, Անտառաշատ և Դավիթբեկ համայնքներ<br>Բնագավառը՝ համայնքային զարգացում |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 4,417,595 (չորս միլիոն չորս հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:<br><br>Ֆինանսավորման աղբյուրը Վորլդ Վիժն Շվեյցարիա:<br><br>Ծախսի ուղղությունը / չափը / ժամկետը:<br>Շինանյութի մատակարարում / 4,417,595 ՀՀ դրամ / 2014թ. երկրորդ կիսամյակ |

դր 6/2

| | | |
|---|---|---|
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի Եղեգ և Սյունիք համայնքների միջնակարգ դպրոցները, Կապանի թիվ 4 և Դավիթբեկ համայնքի մանկապարտեզները, Եղվարդ, Վ. Խոտանան, Անտառաշատ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինները: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 22 ապրիլի 2014թ. – 24 սեպտեմբերի 2014թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի Եղեգ, Սյունիք, Եղվարդ, Վ. Խոտանան, Կապան, Անտառաշատ և Դավիթբեկ համայնքներին կտրամադրվեն շինարարական նյութեր: Այդ աշխատանքներն իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցույթային կարգով ընտրել է մատակարար կազմակերպություն և մատակարարման պայմանագիր է կնքել «Լիաքար» ՍՊԸ-ի հետ: Աշխատանքները նախատեսվում են իրականացնել 2014թ. ապրիլի 22-ից մինչև 2014թ. սեպտեմբերի 24-ը: Ծրագրի արժեքն է 4,417,595 (չորս միլիոն չորս հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի Եղեգ, Սյունիք, Եղվարդ, Վ. Խոտանան, Կապան, Անտառաշատ և Դավիթբեկ համայնքներին կտրամադրվեն շինարարական նյութեր: Ծրագրի նախահաշվային արժեքն 4,417,595 (չորս միլիոն չորս հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի, ընդ որում ըստ համայնքների՝<br><br>Եղեգ համայնք 513,025 դրամ<br>Կապանի թիվ 4 մանկապարտեզ 338,105 դրամ<br>Սյունիք համայնքի միջնակարգ դպրոց 474,680 դրամ<br>Եղվարդ համայնք 515,425 դրամ<br>Վ. Խոտանան համայնք 899,500 դրամ<br>Անտառաշատ համայնք 991,710 դրամ<br>Դավիթբեկ համայնքի մանկապարտեզ 685,150 դրամ |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի Եղեգ, Սյունիք, Եղվարդ, Վ. Խոտանան, Կապան, Անտառաշատ և Դավիթբեկ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Ծրագրով նախատեսված է շինանյութ հանձնել վերոհիշյալ յոթ համայնքներին՝ շինարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի, Կապանի տարածքային զարգացման գրասենյակի, ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» Շվեյցարիայի գրասենյակի, ինչպես նաև ՀՀ Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի Եղեգ, Սյունիք, Եղվարդ, Վ. Խոտանան, Կապան, Անտառաշատ և Դավիթբեկ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br><br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
Սյունիքի Մարզային զարգացման ղեկավար

Էմմա Կաջոյան / K. Hayar [signature]

էջ 6/2

էջ 6/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ձր. 6/2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

03. 06. 14թ № 3/38-2/8329-14

Ձեր № ____________________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.05.2014թ. N 15/15.1/8175-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի յոթ համայնքներին» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

03. 06. 14թ.
№ 034/16323-14

Կատարող՝ Վ. Գաբրիելյան
հեռ. 060 700 227

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ձր. 6/2

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385*
*Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

04. 06. 14թ
№ 02/3694-14

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2014թ. մայիսի 29-ի 15/15.1/8175-14 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի յոթ համայնքներին» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

04. 06. 14թ.
№ 035/16642-14

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**
**Ա. Ստեփանյան, հեռ՝. 380-227**

դր. 6/2

## ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 2

"05" հունիսի 2014 թ.  N 07/07.1/2915-14

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի պատասխան Ձեր՝ 29.05.2014թվականի 15/15.1/8175-14 գրության «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի յոթ համայնքներին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան :

**Հարգանքով՝**

**Ա. ԲԱԽՇՅԱՆ**

05.06.14թ

№ 025/16663-14

---

դր. 6/2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
## ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

« 02 » հունիսի 2014 թ.  N ՋԲ/ԱՆՍ-4/4174-14

Ձեր 2014-05-29, 15/15.1/8175-14

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով ««Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի յոթ համայնքներին» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝  **Ջ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

Կատարող՝ Միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչություն 581-680

**0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30**
http://www.mlsa.am info@mlsa.am

02.06.14թ

№ 040/16180-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE
**DEPUTY MINISTER**

մր. 6/2

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 03 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/6047-14 "31" մայիս 2014

*ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի մայիսի 29-ի №15/15.1/8175-14 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի յոթ համայնքներին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

*ՀԱՐԳԱՆՔՈՎ՝* *Մ.ՄԿՐՏՉՅԱՆ*

*կատ. Ն.Սահակյան*
*հեռ. 524777*

31. 05. 14թ
№ 031/16099-14

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

մր. 6/2

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

05. 06. 14թ
№ 3/3-3/6744-14

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 29.05.2014թ. N15/15.1/8175-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում» Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի յոթ համայնքներին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՄՀՄ բաժին
060 544648, 647

05. 06. 14թ.
№ 044/16683-14

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ձր 6/2

3301ք.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ. ֆաքս (010) 287822 (0285) 52010, էլ-հասցե՝ syunik@mta.gov.am

"03" հունիս 2014թ. №01/2993-14

Ձեր 29 մայիսի 2014 թ № 15/15.1/8175-14

Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման
հանձնաժողովի
նախագահ Ս.Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանում քննարկվել և հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի յոթ համայնքներին» որոշման նախագիծը:

Առաջարկվում է նշված ծրագիրը որակել բարեգործական:

Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

03. 06. 14թ

№ 117/16322-14

Կատարող՝ Ա. Ուստաբաշյան
Հեռ. /0285/ 2-42-10

---

**ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**մայիսի 2014 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

ձր 6/3

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՔԱՂԱՔԻ «ԳԱՐԵԳԻՆ ԱՎԴԱԼՅԱՆԻ» ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ՀԱՏԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 3/3.8-1/ -14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 02/ -14, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի մայիսի -ի N ՎՄ/3-4/ -14 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի 2014 թվականի մայիսի -ի N 02/ -14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 5,424,740 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին քաղաքի «Գարեգին Ավդալյանի անվան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզադահլիճի հատակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱՐԱ-ԱՐԱՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08616945) 2014 թվականի ապրիլի 23-ին կնքված N WVA/Tal ADP/CW-14/001 (RB)/FY 14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մարզադպրոցի մարզադահլիճի հատակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 5,424,740 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն,Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի տնօրենի ժ.պ.՝
Շաղիկ Մարուխյան

21 մայիսի 2014թ.

«ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաքի «Գարեգին Ավդալյանի անվան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզադահլիճի հատակի վերանորոգում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է վերանորոգել ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաքի «Գարեգին Ավդալյանի անվան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (ՀՈԱԿ) մարզադահլիճի հատակը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Կանադայի աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ՝ 02528755, հեռախոս՝ +37410749146 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաք<br>Բնագավառ՝ սպորտ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 5,424,740 (հինգ միլիոն չորս հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաքի «Գարեգին Ավդալյանի անվան մարզադպրոց» ՀՈԱԿ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014թ. ապրիլի 23-ից մինչև 2014թ. հուլիսի 11–ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2014թ. ապրիլի 23-ից մինչև 2014թ. հուլիսի 11–ն ընկած ժամանակահատվածում վերանորոգել ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաքի «Գարեգին Ավդալյանի անվան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզադահլիճի հատակը: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 5,424,740 (հինգ միլիոն չորս հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը մրցութային կարգով ընտրել է շինարարական կազմակերպություն և շինարարական կապալի պայմանագիր է կնքել «ԱՐԱ-ԱՐԱՔՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 5,424,740 (հինգ միլիոն չորս հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաքի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի, Թալինի տարածքային զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» Կանադայի գրասենյակի կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
Արագածոտնի Մարզային զարգացման ղեկավար

Լիանա Սարգսյան /Կ. Mazair/

ճր. 6/3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

ճր. 6/3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

02.06.14թ Nº 3/3.8-2/8285-14

Ձեր Nº ____________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 27.05.2014թ. N 15/15.1/8067-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին քաղաքի «Գարեգին Ավդալյանի» անվան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սպորտդահլիճի հատակի վերանորոգում» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

02.06.14թ
№ 034/16218-14

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Մ · 6/3

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385*
*Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

02. 06. 14թ.

№ 02/3607-14

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2014թ. մայիսի 27-ի**
**15/15.1/8067-14 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին քաղաքի «Գարեգին Ավդալյանի» անվան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սպորտդահլիճի հատակի վերանորոգում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

02. 06. 14թ.

№ 035/16162-14

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**
**Ա. Ստեփանյան, հեռ՝. 380-227**

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ**
**ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐ**

Մ - 6/3

«30» մայիսի 2014 թ. № 1/05/529-14

ՀՀ, Երևան-0001, Արովյան 9
հեռ./ֆ.՝ (374 10) 526-529
էլ. փոստ՝ msy@msy.am
էլ. կայք՝ www.msy.am

Ձեր 2014 թ. մայիսի 27-ի № 15/15.1/8067-14 գրության

*Հայաստանի Հանրապետության*
*կառավարության բարեգործական*
*ծրագրերի համակարգման*
*հանձնաժողովի նախագահ*
*Ս. Տեր-Սիմոնյանին*

*Հարգելի՛ պարոն Տեր-Սիմոնյան*

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին քաղաքի «Գարեգին Ավդալյանի անվան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզադահլիճի հատակի վերանորոգում» ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը առաջարկություններ և առարկություններ չունի:

*Հարգանքով՝* *Գ. Ղազարյան*

30. 05. 14թ

№ 022/15872-14

Կատարող՝ մարզական կազմակերպությունների
և մանկապատանեկան սպորտի
քաղաքականության վարչություն
Ա. Ալավերդյան, հեռ.՝ 52-86-55

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

Մր. 6/3

04. 06. 14թ
№ ԿՄ/3-4/6703-14

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 27.05.2014թ. թիվ 15/15.1/8067-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հանրապետության Արագածոտնի մարզի Թալին քաղաքի «Գարեգին Ավդալյանի» անվան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սպորտդահլիճի հատակի վերանորոգում» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

Ընթացակարգերի բաժին, հեռ.
060 544645

04. 06. 14թ.
№ 044/16489-14

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 г.Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51
0201 c. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail
aragatsotn@mta.gov.am

Մր. 6/3

02. 06. 14թ. N 01/14.1/1674-14

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

Ձեր 27.05.2014թ. թիվ 15/15.1/8067-14 գրությունով ներկայացված ԿԲԾՀՀ ծրագիրն առաջարկում ենք որակել բարեգործական:

**Ս.ՍԱՀԱԿՅԱՆ**

**Կատարող՝ Ա.Դավթյան**
**Հեռ.՝ 0232-3-37-74**

02. 06. 14թ
№ 110/16190-14

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**մայիսի 2014 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՎԵՑ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 3/3.8-1/ -14, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 3/3.8-1/ -14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 02/ -14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 02/ -14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի մայիսի -ի N ՎՄ/3-4/ -14 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի 2014 թվականի մայիսի -ի N 02/ -14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2,873,481 դրամ ընդհանուր արժողությամբ «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի վեց համայնքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՌՈՍ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00651907) 2014 թվականի ապրիլի 22-ին կնքված N WVA/TAL ADP/CM-14/001/LOT 4/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 2,873,481 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի տնօրենի ժ.պ.՝
Շաղիկ Մարուխյան

26 մայիսի 2014թ.

«Շինարարական նյութերի մատակարարում ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի վեց համայնքներին»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է՝ ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտ, Վերին Բազմաբերդ համայնքների դպրոցների, Հացաշեն համայնքի նախակրթարանի և Իրինդ համայնքի մանկապարտեզի սանհանգույցների, Դավթաշեն և Սուսեր համայնքների խմելաջրի ներտնտեսային ցանցերի վերանորոգման նպատակով նշված համայնքներին տրամադրել տարբեր տրամաչափերի խողովակներ և դրանց մոնտաժման համար պահանջվող օժանդակ դետալներ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Կանադայի աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ՝ 02528755, հեռախոս՝ +37410749146 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտ, Վերին Բազմաբերդ, Հացաշեն, Իրինդ, Դավթաշեն և Սուսեր համայնքներ<br>Բնագավառը՝ համայնքային զարգացում |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 2,873,481 (երկու միլիոն ութ հարյուր յոթանասուներեք հազար չորս հարյուր ութսունմեկ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |

2

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Արագածոտնի մարզի Դավթաշեն և Սուսեր համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններ, Գառնահովիտ, Վերին Բազմաբերդ համայնքների դպրոցներ, Հացաշեն համայնքի նախակրթարան և Իրինդ համայնքի մանկապարտեզ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014թ. ապրիլի 22-ից մինչև 2014թ. օգոստոսի 1-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2014թ. ապրիլի 22-ից մինչև 2014թ. օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում Արագածոտնի մարզի Գառնահովիտ, Վերին Բազմաբերդ համայնքների դպրոցների, Հացաշեն համայնքի նախակրթարանի և Իրինդ համայնքի մանկապարտեզի սանհանգույցների, Դավթաշեն և Սուսեր համայնքների խմելաջրի ներտնտեսային ցանցերի վերանորոգման նպատակով նշված համայնքներին տրամադրել տարբեր տրամաչափերի խողովակներ և դրանց մոնտաժման համար պահանջվող օժանդակ դետալներ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2,873,481 (երկու միլիոն ութ հարյուր յոթանասուներեք հազար չորս հարյուր ութսունմեկ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցույթային կարգով ընտրել է շինարարական կազմակերպություն և նյութերի մատակարարման պայմանագիր է կնքել «ՌՈՍ ՊԼԱՍ» ՍՊԸ-ի հետ: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2,873,481 (երկու միլիոն ութ հարյուր յոթանասուներեք հազար չորս հարյուր ութսունմեկ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտ, Վերին Բազմաբերդ համայնքների դպրոցների կառավարման, Հացաշեն, Իրինդ, Դավթաշեն և Սուսեր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի, Թալինի տարածքային զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Հր. 6/4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

02. 06. 14թ. № 3/3.8-2/8306-14

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.05.2014թ. N 15/15.1/8148-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի վեց համայնքներին» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

02. 06. 14թ.

№ 034/16273-14

Հր. 6/4

3

Ինթերնեյշնլ» Կանադայի գրասենյակի կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտ և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:
Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
Արագածոտնի Մարզային ծրագրերի ղեկավար

Լիանա Սարգսյան / Լ. Սարգսյան

Մ. 6/4

## ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 2

"05" հունիսի 2014թ. N.07/07.1/2914-14

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի պատասխան Ձեր՝ 29.05.2014թվականի 15/15.1/8148-14 գրության «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի վեց համայնքներին» որոշման նախագիծը բարեգործական որակելու վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան :

**Հարգանքով՝**

**Ա. ԲԱԽՇՅԱՆ**

05. 06. 14թ.
№ 025/16661-14

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Մ. 6/4

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385*
*Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

04. 06. 14թ.
№ 02/3691-14

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահի պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2014թ. մայիսի 29-ի 15/15.1/8148-14 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի վեց համայնքներին» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

04. 06. 14թ.
№ 035/16650-14

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն**
**Ա. Ստեփանյան, հեռ՝. 380-227**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ
**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE
**DEPUTY MINISTER**

Մ-6/4

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 03 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/6007-14 «30» մայիսի 2014

*ՀՀ կառավարության բարեգործական*
*ծրագրերի համակարգման հանձնաժողովի*
*նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի մայիսի 29-ի №15/15.1/8148-14 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի վեց համայնքներին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

*ՀԱՐԳԱՆՔՈՎ՝* *Մ.ՄԿՐՏՉՅԱՆ*

*կատ. Ն.Սահակյան*
*հեռ. 524777*

30.05.14թ.
№ 031/15935-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Մ-6/4

« 02 » հունիսի 2014 թ.

N [illegible]-4/4189-14

Ձեր 2014-05-29, 15/15.1/8148-14

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ**
**ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով ««Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի վեց համայնքներին» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **Զ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

Կատարող՝ Միջազգային համագործակցության և
զարգացման ծրագրերի վարչություն 581-680

**0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30**
http://www.mlsa.am info@mlsa.am

02.06.14թ.
№ 040/16200-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

05. 06. 14թ
№ ԿՐ/3-3/6741-14
Ար 6/4

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 29.05.2014թ. N15/15.1/8148-14գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի վեց համայնքներին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՄՀՄ բաժին
060 544648, 647

05. 06. 14թ
№ 044/16678-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ար. 6/4

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 г.Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51
0201 c. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail
aragatsotn@mta.gov.am

02. 06. 14թ N 01/14.1/1677-14

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

Ձեր 29.05.2014թ. թիվ 15/15.1/8148-14 գրությունով ներկայացված ԿԲԾՀՀ ծրագիրն առաջարկում ենք որակել բարեգործական:

**Ս.ՍԱՀԱԿՅԱՆ**

Կատարող՝ Ա.Դավթյան
Հեռ.՝ 0232-3-37-74

02. 06. 14թ.
№ 110/16219-14

Ար. 6/5

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**մայիսի 2014 թվականի N Մ - -Ա**

**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՏԱՍՆՅՈԹ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 3/3.8-1/ -14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 02/ -14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 02/ -14 և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի 2014 թվականի մայիսի -ի N 02/ -14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2,336,628 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի տասնյոթ նախադպրոցական հաստատությունների և մանկապարտեզների մանկավարժների վերապատրաստում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի հետ (ՀՎՀՀ՝ 00064024) 2014 թվականի մարտի 20-ին կնքված N WVA/ADPS/BC/01/FY 14 պայմանագրում (պատվեր N 1/FY14) նշված գործարքը, որով նախատեսվում է նախադպրոցական հաստատությունների և մանկապարտեզների 30 մանկավարժի վերապատրաստման կազմակերպում՝ 2,336,628 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

Ար. 6/5

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարան:

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝**
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրեն՝
Միրայր Էդիլյան

05 հունիսի 2014թ.

**«ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի տասնյոթ նախադպրոցական հաստատությունների և մանկապարտեզների մանկավարժների վերապատրաստում»**

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է ուսուցման դասընթացներ կազմակերպել ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի տասնվեց համայնքներում գործող տասնյոթ նախակրթարանների և մանկապարտեզների 30 ուսուցիչների համար երեխայակենտրոն և կրթական ժամանակակից ուսուցման մեթոդների վերաբերյալ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության Կանադայի աջակցող գրասենյակ<br>*Հասցե՝* World Vision Canada, 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>*Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝+374 10 749146* |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Թալին, Դաշտադեմ, Աշնակ, Կաթնաղբյուր, Զովասար, Մաստարա, Արտենի, Ներքին Սասնաշեն, Վերին Բազմաբերդ, Ներքին Բազմաբերդ, Հացաշեն, Զարինջա, Թաթուլ, Ակունք, Ագարակ և Կաքավաձոր համայնքներ:<br><br>Բնագավառը՝ նախադպրոցական կրթություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է՝ է 2,336,628 (երկու միլիոն երեք հարյուր երեսունվեց հազար վեց հարյուր քսանութ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |

2

| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Թալինի թիվ 2, Ավետարանչական, Դաշտադեմի, Աշնակի, Կաթնաղբյուրի, Մաստարայի, Արտենիի, Ներքին Սասնաշենի, Ներքին Բազմաբերդի մանկապարտեզները, Վերին Բազմաբերդի, Հացաշենի, Զարինջայի, Թաթուլի, Ակունքի, Ագարակի, Կաքավաձորի, Զովասարի նախակրթարանները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014թ.-ի մարտի 20-ից - 2014թ-ի սեպտեմբերի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2014թ.-ի մարտի 20-ից մինչև 2014թ.-ի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում իրականացնել հետևյալ միջոցառումները՝<br>1. չորսօրյա դասընթացներ և ուղեկից աշխատանքներ 17 նախադպրոցական հաստատությունների 30 մանկավարժների համար<br>2. տասնինը մենթորական այցեր ՎՎ Թալինի ՏԶԾ 17 նախադպրոցական հաստատություններ՝ ապահովելու երեխայակենտրոն մոտեցման արդյունավետ կիրառումը՝ տեղում դասապրոցեսի դիտարկման, մոդելավորման, մարզումների և շարունակական խորհրդատվությունների միջոցով (1 մենթորական այց յուրաքանչյուր նախադպրոցական հաստատություն և 2-ական այցեր Թալինի N2 և Արտենիի մանկապարտեզներ)<br>3. համապատասխան գրականության և ուսուցողական նյութերի տրամադրում<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2,336,628 (երկու միլիոն երեք հարյուր երեսունվեց հազար վեց հարյուր քսանութ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագրի իրականացման համար պայմանագիր է կնքվել «Քայլ առ Քայլ» բարեգործական հիմնադրամի հետ:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2,336,628 (երկու միլիոն երեք հարյուր երեսունվեց հազար վեց հարյուր քսանութ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցելու է ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Թալին, Դաշտադեմ, Աշնակ, Կաթնաղբյուր, Մաստարա, Արտենի, Ներքին Սասնաշեն, Ներքին Բազմաբերդ համայնքների մանկապարտեզների, Վերին Բազմաբերդ, Հացաշեն, |

| | | |
|---|---|---|
| | | Զարինջա, Թաթուլ, Ակունք, Ազարակ, Կաքավաձոր և Ձովասար, համայնքների դպրոցների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի, Թալինի տարածքային զարգացման գրասենյակի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» Կանադայի գրասենյակի կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br><br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
Արագածոտնի Մարզային զարգացման ղեկավար

Լիանա Սարգսյան / Լ. Hayar

---

մր - 6/5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

մր - 6/5

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

04. 06. 14թ. № 3/3.8-2/8387-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.05.2014թ. N 15/15.1/8231-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի տասնյոթ նախադպրոցական հաստատությունների և մանկապարտեզների մանկավարժների վերապատրաստում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

04. 06. 14թ.
№ 034/16501-14

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ար. 6/5

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385*
*Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

04. 06. 14թ
№ 02/3692-14

**Հայաստանի Հանրապետության կառավարության**
**բարեգործական ծրագրերի համակարգման**
**հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Ի կատարումն ՀՀ կառավարության 2014թ. մայիսի 29-ի**
**15/15.1/8231-14 թվակիր հանձնարարականի**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Հայտնում ենք, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի տասնյոթ նախադպրոցական հաստատությունների և մանկապարտեզների մանկավարժների վերապատրաստում» ծրագրի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Հարգանքով՝** **Գ. Մուրադյան**

04. 06. 14թ
№ 035/16649-14

Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Ա. Ստեփանյան, հեռ՝. 380-227

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ար. 6/5

« 02 » հունիս 2014 թ. N[illegible]-4/4172-14

Ձեր 2014-05-29, 15/15.1/8231-14

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով ««Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Շինարարական նյութերի մատակարարում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի տասնյոթ նախադպրոցական հաստատությունների և մանկապարտեզների մանկավարժների վերապատրաստում» ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Զ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Միջազգային համագործակցության և
զարգացման ծրագրերի վարչություն 581-680

**0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30**
http://www.mlsa.am info@mlsa.am

02. 06. 14թ
№ 040/16163-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

05. 06. 14թ. մր-6/5
№ ԿՄ/3-3/6742-14

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 29.05.2014թ. N15/15.1/8231-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի տասնյոթ նախադպրոցական հաստատությունների և մանկապարտեզների մանկավարժների վերապատրաստում» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ՝

Որոշման նախագծին կից ներկայացված ծրագրի իրականացման ժամկետը սահմանված է 20.03.2014թ-ից մինչև 30.06.2014թ-ը: Հաշվի առնելով, որ ծրագրի իրագործման նպատակով «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի հետ 20.03.2014թ-ին կնքված պայմանագրի գործողության ժամկետ է սահմանված 30.09.2014թ, առաջարկում եմ համապատասխանեցնել այդ ժամկետները:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՄՀՄ բաժին
060 544648, 647

05. 06. 14թ
№ 044/16687-14

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ մր-6/5

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 c. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51
0201 г.Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

31. 05. 14թ. N 01/12.1/1658-14

Ի պատասխան Ձեր՝29.05.2014թ .թիվ 15/15.1/8231-14 գրության

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ- ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր- Սիմոնյան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի տասնյոթ նախադպրոցական հաստատությունների և մանկապարտեզների մանկավարժների վերապատրաստում» ծրագրի նախագիծը քննարկվել է ՀՀ Արագածոտնի մարզպետարանում :

Առաջարկում ենք ծրագիրը որակել բարեգործական:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

Կատարող՝ Սուսաննա Պետրոսյան
հեռ./0232/3-38-70

31. 05. 14թ.
№ 110/16104-14

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**հունիսի 2014 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

Mr. 6/6.1

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի -ի N 3/3.8-2/-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունիսի -ի N ՎՄ/3-4/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել անհատ բարերար Է. Էօրնեկյանը սեփական միջոցներով որպես նվիրատվություն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված օդակարգավորիչի (մեկ տեղ, 2,086 կգ ընդհանուր քաշով, 32,475 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,205.60 եվրո, «Արարատյան» Տ/Մ) ներմուծման ծրագիրը: Բեռնը նախատեսված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Էօրնեկեան վարժարանի համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի տասնյոթ նախադպրոցական հաստատությունների և մանկապարտեզների մանկավարժների վերապատրաստում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության դիտողության և առաջարկության վերաբերյալ** | |
| Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի տասնյոթ նախադպրոցական հաստատությունների և մանկապարտեզների մանկավարժների վերապատրաստում» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ՝ Որոշման նախագծին կից ներկայացված ծրագրի իրականացման ժամկետը սահմանված է 20.03.2014թ-ից մինչև 30.06.2014թ-ը: Հաշվի առնելով, որ ծրագրի իրագործման նպատակով «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի հետ 20.03.2014թ-ին կնքված պայմանագրի գործողության ժամկետ է սահմանված 30.09.2014թ, առաջարկում եմ համապատասխանեցնել այդ ժամկետները: | Ներկայացված ծրագիրը խմբագրվել է: |

Mr. 6/5

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

Երևան-0015, Մ.Խորենացու 3, 7

N ՎՄ/3-4/6700-14
4.06.2014թ

մր 6/6.1

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ձեր ս.թ. մայիսի 30-ի թիվ 15/15.8/8335-14 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ մեր իրավասության շրջանակներում առաջարկություններ ու դիտողություններ չկան:

**Հարգանքով՝** **Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ**

Կատ.՝ Մաքսային մեթոդաբանության բաժին,
հեռ.՝ 060-544-390, 060-544-342

044/16436-14

---

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

մր 6/6.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

4.06.2014թ № 3/3.8-2/8400-14

Ձեր № ____________________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 30.05.2014թ. N 15/15.8/8335-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ընդհանուր առմամբ առարկություններ չունենք, սակայն առաջարկում ենք վերախմբագրել ներկայացված որոշման նախագծի 1-ին կետը, ինչպես նաև նույն կետում ամրագրել անհատ բարերար Է. Էօրնեկյանի միջոցներով ձեռքբերված բեռն առաքող կազմակերպության անվանումը:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 060 700 227

034/16553-14

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| Հայտնում ենք, որ ընդհանուր առմամբ առարկություններ չունենք, սակայն առաջարկում ենք վերախմբագրել ներկայացված որոշման նախագծի 1-ին կետը, ինչպես նաև նույն կետում ամրագրել անհատ բարերար Է. Էօրնեկյանի միջոցներով ձեռքբերված բեռն առաքող կազմակերպության անվանումը: | Նախագծի 1-ին կետում նշված է բարերարի (ուղարկողի) և ստացողի (շահառուի) անունները: Առաքող կազմակերպության անվանում իրավական ակտում նպատակահարմար չէ ամրագրել: |
| | |
| | |

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հունիսի 2014 թվականի N Մ - -Ա

քաղ. Երևան

# ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 3/3.8-2/ -13 և N 3/3.8-2/ -13 , Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի մայիսի -ի N ՖԲ/ՍնՄ-4/ -13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի մայիսի -ի ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի հասցեով ուղարկված բեռի (չոր ապուր, 20 տեղ, 19,201 կգ ընդհանուր քաշով, 111,360 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 9,103 ԱՄՆ-ի դոլար, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման և բաշխման ծրագիրը:

2. Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապե-տության Արմավիրի մարզպետարան:

Ար. 6/6.2

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ար. 6/6.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

04. 06. 14թ. №3/3.8-2/8446-14

Ձեր № ______________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն մեր 02.06.2014թ. N 3/3.8-2/8301-14 գրության և հաշվի առնելով «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի գործադիր տնօրենի 03.06.2014թ. N 12 պատասխան գրությամբ ուղարկված պարզաբանումը, հայտնում ենք, որ Ձեր 30.05.2014թ. N 15/15.1/8254-14 գրությամբ ներկայացված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ուղարկված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ առարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 060 700 227

04. 06. 14թ
№ 034/16615-14

Ար. 6/6.2

«Գ. Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» անունով ուղարկված 20 պալետ, 19 201 կգ բրուտտո քաշով, 111 360 ԱՄՆ դոլար արժողությամբ, ճանապարհածախսը՝ 9 103 ԱՄՆ դոլար արժողությամբ բեռի

ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ

| հ/հ | Ապրանքի անվանումը | Տեղ | Քաշ բրուտտո կգ | Արժեք $ | ԼՂՀ Քաշաթաղի շրջ.սոցապ վարչություն | ԼՂՀ «Արփենի» մայր և նորածին կենտրոն ԲԿ | ՀՀ աշխատանքի և սոց.հարցերի նախարարություն | Գորիսի թիվ 5 ՊՈԻՀ/ ՀՈԱԿ | ՀՀ Արմավիրի մարզի Շենիկի գյուղապետարան | ԵՊՀ արհեստակցական միություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Համակցված սնունդ/չոր ապուր/ | 20 պալետ | 19 201 | 111 360 | 4201 կգ | 11 600 կգ | 1500 կգ | 500 կգ | 1000 կգ | 400 կգ |

Հիմնադրամ
ФОНД
FOUND
01533651

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
**ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА**

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE
**DEPUTY MINISTER**

մ. 6/6.2

0010, Երևան, Գլխավոր պողոտա, կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 58 03 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: miens@edu.am, www.edu.am

N 03/07-1/6073-14 «31» մայիս 2014

*ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Ս.Տեր-Սիմոնյանին*

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր սույն թվականի մայիսի 30-ի №15/15.1/8254-14 գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հացեով ուղարկված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

*ՀԱՐԳԱՆՔՈՎ՝* *Մ.ՄԿՐՏՉՅԱՆ*

*կատ. Ն.Սահակյան*
*հեռ. 524777*

31.05.14թ
№ 031/16122-14

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

մ. 6/6.2

« 02 » մայիս 2014 թ. N ԳԲ/ՄՀՆՊ-4/4173-14

Ձեր 2014-05-30, 15/15.1/8254-14

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Քննարկելով «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի հասցեով ուղարկված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագիծը՝ հայտնում եմ, որ նախարարությունը վերոհիշյալ ծրագրի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունի:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝** **Ձ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

Կատարող՝ Միջազգային համագործակցության և
զարգացման ծրագրերի վարչություն 581-680

02.06.14թ
№ 040/16189-14

**0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ (374 10) 56 53 83, ֆաքս. (374 10) 52 08 30**
http://www.mlsa.am info@mlsa.am

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0015, Մ.Խորենացու 3, 7

04. 06. 14թ.
№ ՀՐ/5-1/6699-14
մ 6/6.2

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր Սիմոնյանին**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 30.05.2014թ. թիվ 15/15.1/8254-14գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ուղարկված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

Կատարող՝ ԳՄՀՄ բաժին
Հեռ. 060.544.648

04. 06. 14թ.
№ 044/16497-14

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ | РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

մ 6/6.2

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ | МАРЗПЕТ АРМАВИРА

<< 02 >> հունիս 2014թ. N 01/06.1/1821-14

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի պատասխան Ձեր 30.05.2014թ. N 15/15.1/8254-14 գրության տեղեկացվում է, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ի հասցեով ուղարկված բեռի ներմուծման և բաշխման ծրագրի մասին» որոշման նախագիծը քննարկվել է ՀՀ Արմավիրի մարզպետարանում և արժանացել հավանության:

Չենք առարկում այն որպես բարեգործական որակելու:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կատ՝ Փ. Կարապետյան
Լ. Մուշեղյան
Վ. Ալեքսանյան

0237/ 2-42-62

02. 06. 14թ.
№ 112/16271-14

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ հունիսի 2014 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

Սր. 6/6.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1
(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի -ի N 3/3.8-2/-14 և հունիսի -ի N ՎՄ/3-4/-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ո ւ մ է.**

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված էլեկտրական լուսատուն (մեկ տեղ, 23 կգ ընդհանուր քաշով, 99 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա և 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Սր. 6/6.3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

31.05.2014թ. №3/3.8-2/8214-14

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.05.2014թ. N 15/15.6/8149-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին N 1 (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 060 700 227

034/16101-14
31.05.2014թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

Երևան-0015, Մ.Խորենացու 3, 7

N: ՖՆ/15-1/6690-14
04.06.2014թ.

ՀՐ 6/6.3

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր Սիմոնյանին**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 29.05.2014թ. թիվ 15/15.6/8149-14 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին **N 1** (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով

**Վ. Միրումյան**

Կատարող՝ ԳՄՀՄ բաժին
Հեռ. 060.544.648

044/16498-14
04.06.2014թ.

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**___ հունիսի 2014 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

ՀՐ 6/6.4

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2**
**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի -ի N 3/3.8-2/-14 և հունիսի -ի N ՎՄ/3-4/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված ջրի պոմպերը (3 տեղ, 450 կգ ընդհանուր քաշով, 18,481 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՃՓ» ՏՍ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա և 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

31.05.2014թ. N 3/3.8-2/8215-14

Ձեր N ________________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.05.2014թ. N 15/15.6/8147-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին N 2 (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 060 700 227

034/16100-14
31.05.2014թ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

N 41/18-4/6698-14
04.06.2014թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 29.05.2014թ. թիվ 15/15.6/8147-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին N 2 (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՄՀՄ բաժին,
հեռ. 060 544647

044/16480-14
04.06.2014թ.

*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ հունիսի 2014 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

Մ · 6/6.5

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 3**
**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի -ի N 3/3.8-2/-14 և հունիսի -ի N ՎՄ/3-4/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված էլեկտրական լուսատուն՝ իրանով (մեկ տեղ, 6.2 կգ ընդհանուր քաշով, 365.61 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա և 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Մ · 6/6.5

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

31.05.2014թ. № 3/3.8-2/8212-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.05.2014թ. N 15/15.6/8174-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին N 3 (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 060 700 227

034/16098-14
31.05.2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

Երևան-0015, Մ.Խորենացու 3, 7

№ ԿՄ/5-1/6689-14
04.06.2014թ.

ՄԻ-6/6.5

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր Սիմոնյանին**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 29.05.2014թ. թիվ 15/15.6/8174-14 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին N 3 (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով

Վ. Միրումյան

Կատարող՝ ԳՄՀՄ բաժին
Հեռ. 060.544.648

044/16473-14
04.06.2014թ.

---

*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**___ հունիսի 2014 թվականի N Մ -      -Ա**
**քաղ. Երևան**

ՄԻ-6/6.6

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N Մ-361-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի -ի N 3/3.8-2/-14 և հունիսի -ի N ՎՄ/3-4/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված կահույքը և կենցաղային պարագաները (686 տեղ, 12,684 կգ ընդհանուր քաշով, 249,583 ԱՄԷ-ի դիրհամին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,980 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «ՀԲԸՄ երիտասարդական կենտրոնի կահավորում» ծրագրի մասին» N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

մր 6/6.6

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

31.05.2014թ. № 3/3.8-2/8209-14

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.05.2014թ. N 15/15.6/8140-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 060 700 227

034/16103-14
31.05.2014թ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

N: 4/18-4/6684-14
04.06.2014թ.

մր 6/6.6

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 29.05.2014թ. թիվ 15/15.6/8140-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՄՀՄ բաժին,
հեռ. 060 544647

044/16478-14
04.06.2014թ.

*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ հունիսի 2014 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

Ար. 6/6.7

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-809-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2**
**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի -ի N 3/3.8-2/-14 և հունիսի -ի N ՎՄ/3-4/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված՝ ստորև նշված ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-809-Ա որոշմամբ հաստատված ծրագրի (2012 թվականի հոկտեմբերի 31-ի N Մ-872-Ա, 2013 թվականի նոյեմբերի 29-ի N Մ-1109-Ա և 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-059-Ա որոշումների խմբագրությամբ) շրջանակներում՝

1) հուշամեդալներ՝ մեկ տեղ, 18.5 կգ ընդհանուր քաշով, 258 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 940 եգիպտական ֆունտ, «Զվարթնոց» ՄՏ.

2) բնական դեկորատիվ ծառեր՝ 1,000 տեղ, 13,965 կգ ընդհանուր քաշով, 25,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 1,700 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ար. 6/6.7

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

30.05.2014թ. №3/3.8-2/8185-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.05.2014թ. N 15/15.6/8138-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի N Մ-809-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին N 2 («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 060 700 227

034/15983-14
30.05.2014թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

Երևան-0015, Մ.Խորենացու 3, 7

Ն: ՎՄ/3-1/6687-14
04.06.2014թ.
ՀՄ 6/6.7

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր Սիմոնյանին**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 29.05.2014թ. թիվ 15/15.6/8138-14 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի N Մ-809-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին **N 2** («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առարկություններ չունենք:

Հ ա ր գ ա ն ք ո վ  Վ .
Մ ի ր ո ւ մ յ ա ն

044/16474-14
04.06.2014թ.

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**— հունիսի 2014 թվականի N Մ-  -Ա**
**քաղ. Երևան**

ՀՄ 6/6.8

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N Մ-413-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբու-ժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-ների նախարարության 2014 թվականի մայիսի 31-ի N 3/3.8-2/8211-14 և հունիսի 4-ի N ՎՄ/ 3-4/6704-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի 2-ի N ԱՄ/22.2/5370-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայկական ակնաբուժության նախագիծ» կորպորացիայի կողմից ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ԱՄՆ-ից ստացված բեռը՝ ակնաբուժական դեղորայք (7 տեղ, 150 կգ, 103,790 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, փոխադրման ծախսերը կազմել են 1,062 ԱՄՆ-ի դոլար, «Ջվարթնոց» ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարե-գործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրակա-նացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (յոթերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

Ա 6/6.8

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

31.05.14 №3/3.8-2/8211-14

Ձեր № ______________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.05.2014թ. N 15/15.4/8163-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 060 700 227

N 034/16102-14
31.05.14թ.

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

N ՎԱ/3-4/6704-14
04.06.14թ. Ա 6/6.1

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 29.05.2014թ. թիվ 15/15.4/8163-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ) որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

Ընթացակարգերի բաժին, հեռ.
060 544645

N 044/16492-14
04.06.14թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Ձր. 6/6.8

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3

հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

02.06.14 N ԱՆ/22.2/5370-14
Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 2014 թվականի մայիսի 29-ի թիվ 15/15.4/8163-14 կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ) որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախչյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 52 27 21

N 020/16230-14
02.06.14թ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**---- հունիսի 2014 թվականի N Մ- -Ա** Ձր. 6/6.9
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ** («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 4-ի և 6-ի NN 3/3.8-2/8451-14, ՎՄ/3-7/6738-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի 5-ի N ԱՄ/22.2/5543-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռները (դեղեր՝ 34 տեղ, 325 կգ քաշով, 70,953.6 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը և 1 տեղ, 3.2 կգ քաշով, 3,480 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

հր. 6/6.Չ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

04.06.14թ. № 3/38-2/8451-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 03.06.2014թ. N 15/15.4/8606-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռի մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (1)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 060 700 227

N 034/16625-14
04.06.14թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0015, Մ.Խորենացու 3, 7

N ՎԱ/37/6738-14
05.06.14
հր. 6/6.Չ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր ս.թ. հունիսի 3-ի թիվ 15/15.4/8606-14 գրության հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» թիվ Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի կողմից ստացված բեռների (դեղեր՝ 34 տեղ, 325 կգ քաշով, 70,953.6 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը և 1 տեղ, 3.2 կգ քաշով, 3,480 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը) ներմուծման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ մեր իրավասությունների շրջանակներում առարկություններ չունենք:

Հարգանքով՝ Վ. Միրումյան

Կատ.՝ Մաքսային մեթոդաբանության բաժին,
հեռ.՝ 060-544-390, 060-544-342,

N 044/16670-14
05.06.14թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Ձր. 6/6.9

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

05.06.14 ԱՄ/22.2/5543-14

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 2014 թվականի հունիսի 03-ի թիվ 15/15.4/8606-14 կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ներմուծվող բեռների մասին («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (1) որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Նաիրա Փափախյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության
և բժշկական տեխնոլոգիաների վարչություն
հեռախոս 52 27 21

N020/16732-14
05.06.14թ

***ՆԱԽԱԳԻԾ***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**հունիսի 2014 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

Ձր. 6/6.10

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ- 774 - Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի -ի N 3/3.8-2/-14 և 2014 թվականի հունիսի -ի N ՎՄ/3-4/-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից ձեռք բերված բեռը (1 տեղ, 433 կգ ընդհանուր քաշով, 16,000 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, որից 2,000 ԱՄՆ-ի դոլար կազմում է փոխադրման ծախսերը, Արարատյան Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության կողմից իրականացվող «Ավեդիսյան դպրոցի կառուցում» ծրագրի մասին» N Մ-774-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ՀԻ 6/6.10

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

05.06.14թ. № 3/3.8-2/8517-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 04.06.2014թ. N 15/15.2/8668-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի N Մ-774-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 060 700 227

037/16779-14

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0015, Մ.Խորենացու 3, 7

05.06.14թ.
ՀՓ/3-Վ/6816-14
ՀԻ 6/6.10

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր ս.թ. հունիսի 4-ի թիվ 15/15.2/8668-14 գրության հայտնում ենք, որ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի Մ-774-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից ներմուծվող (1 տեղ, 433 կգ ընդհանուր քաշով, 16,000 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, որից 2,000 ԱՄՆ-ի դոլար կազմում է փոխադրման ծախսերը) բեռի վերաբերյալ մեր իրավասությունների շրջանակներում առարկություններ չունենք:

Հարգանքով՝ Վ. Միրումյան

Կատ.՝ Մաքսային մեթոդաբանության բաժին,
հեռ.՝ 060-544-390, 060-544-342,

047/16796-14

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**հունիսի 2014 թվականի N Մ - - Ա** ձր. 6/7.1
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-106-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստան» համահայկական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 3/3.8-1/ -14 և 2014 թվականի մայիսի -ի N ՎՄ/3-4/ -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն - 2013» ծրագրի մասին» N Մ-106-Ա որոշմամբ (2014 թվականի մարտի 14-ի N Մ-217-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2014 թվականի մայիսի 15-ին կնքված՝ N Ծ-05/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի 2013 թվականի տարեկան հաշվետվության գրքի (500 օրինակ) տպագրման աշխատանքների իրականացում՝ 2,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

ձր. 6/7.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

04. 06. 14թ. №3/3.8-2/8380-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.05.2014թ. N 15/15.1/8172-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-106-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

04. 06. 14թ
№ 034/16485-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

04. 06. 14թ  Մր 6/7.1

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

№ Կր/3-8/6694-14

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 29.05.2014թ. թիվ 15/15.1/8172-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-106-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստան» համահայկական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳԱՀՄ բաժին, հեռ. 060 544648

04. 06. 14թ
№ 044/16488-14

---

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

___ մայիսի 2014 թվականի N Մ-        -Ա   Մր 6/7.2
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-945-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի -ի N 3/3.8-2/-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի -ի N ՎՄ/3-4/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01565354) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-945-Ա որոշմամբ հաստատված (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-645-Ա և 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-056-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էյ Թի Էմ Սի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02576119) 2014 թվականի մարտի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

մր. 6/7.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

15.05.2014թ. № Յ/3.8-Ձ/7335-14

Ձեր № ____________________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 12.05.14թ. N 15/15.6/6862-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-945-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ընդհանուր առմամբ առարկություններ չունենք, սակայն ներկայացված որոշման նախագծի 1-ին կետում նշված «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի և «Էյ Թի Էմ Սի» ՓԲԸ-ի միջև N 10002082749 պայմանագիրը կնքվել է 30.03.14թ. իսկ ըստ նշված պայմանագրի 8.1 կետի՝ այն գործում է մինչև 01.02.14թ:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
Հեռ. 060 700 227

034/14091-14
15.05.2014թ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

մր. 6/7.2

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

N: ՀՄ/3-4/6088-14
19.05.2014թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 12.05.2014թ. թիվ 15/15.6/6862-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-945-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

Ընթացակարգերի բաժին, հեռ.
060 544645

044/14399-14
19.05.2014թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-945-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ** | |
| հայտնում ենք, որ ընդհանուր առմամբ առարկություններ չունենք, սակայն ներկայացված որոշման նախագծի 1-ին կետում նշված «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի և «Էյ Թի Էմ Սի» ՓԲԸ-ի միջև N 10002082749 պայմանագիրը կնքվել է 30.03.14թ. իսկ ըստ նշված պայմանագրի 8.1 կետի՝ այն գործում է մինչև 01.02.14թ | Հաշվի է առնվել՝ հիմնադրամի կողմից ներկայացվել է լրամշակված պայմանագիր: |

Դ. 6/7.2

# ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

30.03.2014թ. — ք. Երևան

«Փյունիկ» Բարեգործական հիմնադրամը ի դեմս նախագահ Լ. Սարգսյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Գնորդ», մի կողմից, և «էՅ Թի ԷՄ Սի» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Գագիկ Կարապետյանի, այսուհետև՝ «Մատակարար», մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

1.1 Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված պայմաններով և ժամկետներում Գնորդին հանձնել Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ մշակութային կենտրոնի կառուցման աշխատանքների համար սեփականության իրավունքով իրեն պատկանող շինարարական տարբեր նյութեր՝ համաձայն Գնորդի պատվերի, այսուհետև՝ «Ապրանք», իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքները և վճարել դրանց համար:

## 2. Մատակարարման պայմանները

2.1 Մատակարարումը իրականացվում է Գնորդի ուժերով և միջոցներով:
2.2 Մատակարարումը իրականացվում է Գնորդի կողմից պատվերը ստանալուց հետո:

## 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1.Գնորդը պարտավոր է՝
3.1.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
3.1.2 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները:
3.2.Գնորդը իրավունք ունի՝
3.2.1 Եթե հանձնված է անպատշաճ որակի Ապրանք, իր ընտրությամբ պահանջել
1) համաչափ պակասացնելու Ապրանքի գինը,
2) հատուցելու Ապրանքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը:
3.3 Մատակարարն պարտավոր է՝
3.3.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, յուրաքանչյուր խմբաքանակի համար ներկայացնել հաշիվ-ապրանքագիր :
3.3.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:
3.3.3 Մատակարարը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:
3.4. Մատակարարն իրավունք ունի՝
3.4.1 Գնորդի կողմից սույն պայմանագրով սահմանված ժամկետում ապրանքները չընդունելու դեպքում հրաժարվել պայմանագիրը կատարելուց և Գնորդից պահանջել վճարելու ապրանքների համար:

## 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Պայմանագրի նախնական արժեքը կազմում է 5000000 / հինգ միլիոն/ ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի և ենթակա է փոփոխման կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրով:
4.2 Գնորդն Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Մատակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:
4.3 Եթե ՀՀ Կառավարության կողմից չընդունվեն հարկերի և տուրքերի պարտադիր վճարումների գծով արտոնությունների մասին որոշումներ, ապա Գնորդը պարտավորվում է կատարել ԱԱՀ-ի վճարումները:

## 5. Ապրանքի հանձնումը և ընդունումը

5.1 Ապրանքն ընդունելու ժամանակ Գնորդը ստուգում է դրա համապատասխանությունը ըստ անվանացանկի, քանակի, որակի և տեսականու:
5.2 Ապրանքի հանձնումը և ընդունումը վերջացնելուց հետո Գնորդը կազմում է ապրանքն ընդունելու մասին ակտ:

Ձր.6/7.2

5.3 Գնորդի կողմից ակտն ստորագրելը նշանակում է, որ ստուգումը կատարվել է ամբողջ ծավալով:

**6. Կողմերի պատասխանատվությունը**

Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**8. Այլ պայմաններ**

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 01.07.2014թ:

8.2 Սույն պայմանագիրը կազմված է 2 /երկու/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Գնորդ
«Փյունիկ» Բարեգործական հիմնադրամ
ՀՀ, ք.Երևան, Ե. Քոչար փ., Սուրբ Գ. Լուսավորիչ մայր եկեղեցի
ՀՎՀՀ 01565354
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
[illegible]
[illegible] 1500 0351 [illegible] 0

Լ. [illegible]
(ստորագրություն)
Կ.Տ

Մատակարար
«էՅ Թի ԷՄ Սի» ՓԲԸ
Իրավ. հասցե. ՀՀ, ք. Երևան, Ամիրյանն 26
Իրավ. հասցե. ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 5-րդ նրբ., 21
ՀՎՀՀ 02576119
Բանկ. «էյչ-էս-բի-սի» ՓԲԸ Հայաստան
Հ/Հ 21700 003 084357 001

Գ. Կարապետյան
(ստորագրություն)
Կ.Տ

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ հունիսի 2014 թվականի N Մ - -Ա** Ձր.6/7.3

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-945-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1**

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի -ի N 3/3.8-2/-14 և հունիսի -ի N ՎՄ/3-4/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01565354) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոմիտաս Վարդապետի թանգարան-ինստիտուտ» մշակութային կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-945-Ա որոշմամբ հաստատված (2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-645-Ա և 2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-056-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԳԻՁԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00851914) 2014 թվականի ապրիլի 22-ին կնքված՝ N 2/Kom պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տանիքի երկշերտ ջրամեկուսացման աշխատանքների իրականացում՝ 1,459,797 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Մ. 6/7.3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

04.06.2014թ. №3/3.8-2/8447-14

Ձեր № ______________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 30.05.2014թ. N 15/15.6/8263-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-945-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

034/16616-14
04.06.2014թ.

Մ. 6/7.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

N 02/3-3/6743-14
05.06.2014թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 30.05.2014թ. N15/15.6/8263-14 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-945-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ.

Նախագծին կից ներկայացված փաստաթղթերում, մասնավորապես «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի և «ԳԻՁԱ» ՍՊԸ-ի միջև 2014 թվականի ապրիլի 22-ին կնքված N 2/Kom պայմանագրում հստակեցված չէ, թե պայմանագրով նախատեսված աշխատանքների արժեքը արդյոք ներառում է ավելացված արժեքի հարկի գումարը: Միաժամանակ հստակ չէ վերոհիշյալ պայմանագրի գործողության ժամկետը, մինչդեռ 30.11.2012թ.N Մ-945-Ա որոշմամբ բարեգործական որակված ծրագրի իրականացման վերջնաժամկետ սահմանված է 31.07.2014թ-ը: Այդ կապակցությամբ առաջարկում եմ հստակեցնել նշված դրույթները:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՄՀՄ բաժին
060 544648, 647

044/16686-14
05.06.2014թ.

## ՏԵՂԵԿԱՆՔ

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-945-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 («Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ** | |
| Նախագծին կից ներկայացված փաստաթղթերում, մասնավորապես «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի և «ԳԻԶԱ» ՍՊԸ-ի միջև 2014 թվականի ապրիլի 22-ին կնքված N 2/Kom պայմանագրում հստակեցված չէ, թե պայմանագրով նախատեսված աշխատանքների արժեքը արդյոք ներառում է ավելացված արժեքի հարկի գումարը: Միաժամանակ հստակ չէ վերոհիշյալ պայմանագրի գործողության ժամկետը, մինչդեռ 30.11.2012թ.N Մ-945-Ա որոշմամբ բարեգործական ոակված ծրագրի իրականացման վերջնաժամկետ սահմանված է 31.07.2014թ-ը: Այդ կապակցությամբ առաջարկում եմ հստակեցնել նշված դրույթները: | Հաշվի է առնվել՝ հիմնադրամի կողմից ներկայացվել է լրամշակված պայմանագիր՝ նշումով, որ նախատեսված աշխատանքների արժեքը չի ներառում ավելացված արժեքի հարկի գումարը: Եվ հիմնադրամի հավաստմամբ աշխատանքները կավարտվեն մինչև բարեգործական ոակված ծրագրի իրականացման վերջնաժամկետը: |

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2/Kom

*ք. Երևան* *22/04/2014*

«Փյունիկ» Բ/Հ հետագայում Պատվիրատու՝ ի դեմս նախագահ Լ.Սարգսյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից "ԳԻԶԱ" ՍՊԸ հետագայում Կապալառու՝ ի դեմս տնօրեն Տ.Զաքարյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

**1.1** Սույն պայմանագրի համաձայն, Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ սույն պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով կատարել ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց հասցում գտնվող Կոմիտասի թանգարանի շենքի տանիքի երկշերտ ջրամեկուսացման աշխատանքները:

## 2. Պայմանագրային գինը

2.1

| Հ/Հ | Աշխատանքի անվանում | Չափման միավոր | Քանակը | Արժեքը (առանց ԱԱՀ) | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ջրամեկուսացում 1-ին շերտ | քմ | 170 | 4010,48 | 681782 |
| 2 | Ջրամեկուսացում 2-րդ շերտ գրանուլապատ | քմ | 170 | 4576,56 | 778015 |
| Ընդամենը | | | | | 1459797 |

2.2 Աշխատանքների իրականացման ընթացքում Պատվիրատուն վճարումները կատարում է համաձայն կատարողական ակտերի փաստացի ծավալի և պայմանագրային արժեքի:

## 3. Պայմանագրի ժամկետը

3.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում *22/04/2014* թ. և գործում է մինչև աշխատանքների ավարտը:

## 4. Կողմերի Պատասխանատվությունը

4.1 Կապալառուն պարտավորվում է աշխատանքները կատարել համաձայն նախագծի, ՀՀ գործող շինարարական նորմերի և կանոնների համաձայն:

4.2 Պատվիրատուն պարտավորվում է ապահովել աշխատանքային ճակատով:

4.3 Կատարված աշխատանքները ընդունելուց հետո Պատվիրատուն պարտավորվում է վարձատրել համաձայն կատարողական ակտերի 5 աշխատանքային օրվա ընթացքում:

4.4 Կապալառուն պարտավորվում անհատույց վերացնել այն թերությունները, որոնք կհայտնաբերվեն Աշխատանքներն ավարտելուց հետո 5 տարվա ընթացքում, եթե դրանք չեն առաջացել սխալ շահագործման հետևանքով (մեխանիկական ներգործություն կամ այլ վնասվածք):

Ն.Ր. 8/7.3

## 5. Աշխատանքների հանձնում և ընդունում

5.1 Կատարված աշխատանքների արդյունքի հանձնմանը պատրաստ լինելու մասին Կապալառուի հաղորդագրությունը ստացած Պատվիրատուն պարտավոր է անմիջապես անցնել ընդունելուն:

5.2 Պատվիրատուն կազմակերպում և իրականացնում է աշխատանքների արդյունքի ընդունումը իր հաշվին:

5.3 Կապալառուի կողմից աշխատանքների արդյունքի հանձնում և Պատվիրատուի կողմից դրա ընդունումը ձևակերպում են ակտով, որը ստորագրում են երկու կողմերը: Եթե կողմերից մեկը հրաժարվում է ստորագրել ակտը, ակտի մեջ արվում է նշում դրա մասին և ակտը ստորագրում է մյուս կողմը:

5.4 Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել աշխատանքների արդյունքի ընդունումից, եթե հայտնաբերվել են թերություններ, որոնք բացառում են օբյեկտի սույն պայմանագրում նշված նպատակով օգտագործելու հնարավորությունը և չեն կարող վերացվել Պատվիրատուի կամ Կապալառուի կողմից:

## 6. Եզրափակիչ դրույթներ

6.1 Եթե շինարարության և դրա հետ կապված աշխատանքների կատարման ընթացքում հայտնաբերվել են սույն պայմանագիրը հարկ եղած կերպով կատարելուն խոչընդոտող հանգամանքներ, կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է ձեռնարկել իրենից կախված ամեն խելամիտ միջոց այդ հանգամանքները կողմերից վերացնելու ուղղությամբ: Այն կողմը, որը չի կատարել այդ պարտավորությունը, զրկվում է համապատասխան հանգամանքները չվերացված լինելու պատճառով իր կրած կորուստների հատուցման իրավունքից:

6.2 Բոլոր այլ դեպքերում, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, գործում են ՀՀ օրենսդրության նորմերը:

6.3 Պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն միևնույն իրավաբանական ուժը:

Կողմերի հասցեները և վավերապայմանները:

**«Պատվիրատու»**

«Փյունիկ» Բ/Հ
ք. Երևան, Ե.Քոչար
Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի
ՀՎՀՀ 01565354
«Հայբիզնեսբանկ Վարդանանց մ/ճ»
Հ/Հ 1150003983920100

Նախագահ Լ.Ս[illegible]
(ստորագրություն)

**«Կապալառու»**

«ԳԻԶԱ» ՍՊԸ
ք. Երևան, Թոթովենցի 2/30
ՀՎՀՀ 00851914
"ՊՐՈՄԵԹԵՅ ԲԱՆԿ" ՍՊԸ
Հ/Հ 16600 00228960100

Տնօրեն Տ.Զաքարյան
(ստորագրություն)

---

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

Ն.Ր. 8/7.4

**___ հունիսի 2014 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-094-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 3/3.8-2/-14 և մայիսի -ի N ՎՄ/3-4/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորի նոր կառուցվող բժշկական կենտրոնի ծննդատան մասնաշենքի կառուցման» ծրագրի մասին» N Մ-094-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆիլիշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07905342) 2014 թվականի մայիսի 23-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 88,616,799 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ձ Ն 6/7.4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

04. 06. 2014թ. №3/3.8-Ձ/8448-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 30.05.2014թ. N 15/15.6/8262-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-094-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

034/16617-14
04. 06. 2014թ.

---

Ձ Ն 6/7.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

N: ՎՄ/3-3/6685-14
04. 06. 2014թ.

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 30.05.2014թ. թիվ 15/15.6/8262-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-094-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳՄՀՄ բաժին, հեռ. 060 544648

044/16477-14
04. 06. 2014թ.

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**   ՀՐ. 6/7.5

**___ հունիսի 2014 թվականի N Մ -    -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-565-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի -ի N 3/3.8-2/-14 և հունիսի -ի N ՎՄ/3-4/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգման, վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին» N Մ-565-Ա որոշմամբ (2012 թվականի հունիսի 8-ի N Մ-407-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՊրոֆԱլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2014 թվականի մայիսի 8-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ալյումինե պատուհանների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 408,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

ՀՐ. 6/7.5

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

04.06.2014թ. № 3/3.8-2/8379-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.05.2014թ. N 15/15.6/8170-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի N Մ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

034/16481-14
04.06.2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ


0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303


N: ԿՄ/3-4/6705-14
04.06.2014թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 29.05.2014թ. թիվ 15/15.6/8170-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի N Մ-565-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1 («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան


Ընթացակարգերի բաժին, հեռ.
060 544645


044/16494-14
04.06.2014թ.

**ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**___ հունիսի 2014 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի -ի N 3/3.8-2/-14 և հունիսի -ի N ԿՄ/3-4/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ինֆորմատիկ սոլուշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00061961) 2014 թվականի մայիսի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում համակարգչային տպիչ սարքերի ժապավենների ձեռքբերում՝ 585,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

ԱՐ 6/7.3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

04.06.2014թ. № 3/3.8-2/8390-14

Ձեր № ________________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.05.2014թ. N 15/15.6/8171-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

034/16539-14
04.06.2014թ.

---

ԱՐ 6/7.6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

№ ՎՄ/3-4/6706-14
04.06.2014թ.

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 29.05.2014թ. թիվ 15/15.6/8171-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Սիմոնյան» կրթական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

Ընթացակարգերի բաժին, հեռ.
060 544645

044/16495-14
04.06.2014թ.

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**հունիսի 2014 թվականի N Մ- -Ա** дп. 6/7.7

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N1)**

**(Հայաստանի մանուկների հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 3/3.8-2/ -14 և N 3/3.8-2/ -14 N եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջուլիաննա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04700102) 2014 թվականի մայիսի 23-ին կնքված՝ N Գ-02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կահույքի ձեռքբերում՝ 10,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

дп. 6/7.7

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

04. 06. 14թ. №3/3.8-2/8398-14

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 30.05.2014թ. N 15/15.1/8255-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 17-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (N1) (Հայաստանի մանուկների հիմնադրամ)» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

04. 06. 14թ.

№ 034/16551-11

Մ. 6/7.7

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

05. 06. 14թ.
№ ՎՂ/3-3/6746-14

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 30.05.2014թ. N15/15.1/8255-14 գրությանը կից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի փետրվարի 17-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (N1) (Հայաստանի մանուկների հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՄՀՄ բաժին
060 544648, 647

05.06.14թ
№ 044/16695-14

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Մ. 6/7.8

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

մայիսի 2014 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի ի N 3/3.8-2/ -14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի ապրիլի -ի N ՎՄ/3-4/ -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ծիծեռնակաբերդի հուշահամալիր «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ (2014 թվականի մայիսի 16-ի N Մ-450-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Բոֆֆո» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00121699) հետ 2014 թվականի մայիսի 20-ին կնքված N 20 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լուսատուների տեղադրման աշխատանքների իրականացում՝ 1,800,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գիզա» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00851914) 2014 թվականի մայիսի 20-ին կնքված N 19 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամեկուսացման և գոլորշամեկուսացման աշխատանքների իրականացում՝ 1,170,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

Ար. 6/7.8

3) «Մետաղ-դիզայն» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01239878) հետ 2014 թվականի մայիսի 20-ին կնքված N 18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղական դռների և շերտավարագույրների պատրաստման ու տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2,400,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

4) «Վուդկոաֆտ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00440713) հետ 2014 թվականի մայիսի 12-ին կնքված N 15 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դռների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2,423,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

5) «Եվրոստան-Ոյուտ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01537756) հետ 2014 թվականի մայիսի 20-ին կնքված N 16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պրոֆիլներով ալյումինե կոնստրուկցիաների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 18,304,400 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

6) «Հատուկ սանտեխմոնտաժ» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 03503214) հետ 2014 թվականի մայիսի 20-ին կնքված N 21 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սանտեխնիկական աշխատանքների իրականացում՝ 4,900,370 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

7) «Էլեկտրոգեն» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00872001) հետ 2014 թվականի մայիսի 20-ին կնքված N 24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրամոնտաժային աշխատանքների իրականացում՝ 42,153,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

8) «Լցոն» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00057089) հետ 2014 թվականի մայիսի 26-ին կնքված N 25/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համաշինարարական աշխատանքների իրականացման համար լվացած ավազի ձեռքբերում՝ 3,600,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

Ար. 6/7.8

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

04. 06. 14թ. № 3/3.8-2/8397-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.05.2014թ. N 15/15.1/8238-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

04. 06. 14թ.
№ 034/16548-14

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ


0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303


04. 06. 14թ
№ ԴՆ/3-3/6686-14

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 30.05.2014թ. թիվ 15/15.1/8238-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Ծիծառնակաբերդ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում հայտնում եմ.

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշման նախագծի 2-րդ կետում «Գիզա» ՍՊԸ հետ կնքված գործարքի արժեքի (18308180 դրամ) և կից ներկայացված տվյալ գործարքը հիմնավորող պայմանագրի 4.1 կետում նշված արժեքի (1170000 դրամ) միջև առկա է անհամապատասխանություն, առաջարկում եմ հստակեցնել այն:

2. Քանի որ, կից ներկայացված «Լցոն» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրում կազմակերպության ՀՎՀՀ-ն նշված է ինը նիշով, ուստի առաջարկում եմ ճշտել այն:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳՄՀՄ բաժին, հեռ. 060 544648

04. 06. 14թ
№ 044/16476-14

# ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 25/Մ

ք.Երևան                                                                26 մայիսի 2014թ.

«Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս գործադիր տնօրեն՝ Հ. Չիբչյանի, որը գործում է իր կանոնադրության համաձայն, մի կողմից, և "Լցոն" ՍՊԸ ի դեմս տնօրեն Վ.Աղջոյանի, այսուհետ՝ «Մատակարար», որը գործում է իր կանոնադրության համաձայն, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1 Համաձայն սույն պայմանագրի, Մատակարարը պարտավորվում է Պատվիրատուի կողմից լիազորված անձին հանձնել Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի Հայոց Ցեղասպանության թանգարան–ինստիտուտ ՊՈԱԿ-ի վերակառուցման ու ընդարձակման համաշինարարական աշխատանքների համար Հավելված -ում նշված լվացած ավազ, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա դիմաց:

## 2. Պայմանագրի գինը և ժամկետները

2.1 Պայմանագրի գինը որոշվում է համաձայն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ի, և կազմում է **3 600 000 (երեք միլիոն վեց հարյուր հազար)** ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:

2.2 Եթե ՀՀ Կառավարության կողմից չընդունվեն հարկերի և տուրքերի պարտադիր վճարումների գծով արտոնությունների մասին որոշումներ, ապա Պատվիրատուն պարտավորվում է հատուցել ԱԱՀ-ի գումարը:

2.3 Ապրանքի մատակարարման ժամկետը համարվում է ավարտված սույն պայմանագրի հավելվածում նշված ապրանքի ամբողջ քանակի հանձնման-ընդունման պահից:

## 3. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

3.1 Ապրանքի տրանսպորտային տեղափոխումը իրականացնում է Պատվիրատուի կողմից լիազորված անձը՝ իր միջոցներով և իր հաշվին:

## 4. Ապրանքի հանձնումը և ընդունումը

4.1 Ապրանքն ընդունելու ժամանակ Պատվիրատուի կողմից լիազորված անձը ստուգում է դրա համապատասխանությունը՝ ըստ քանակի:

## 5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարվելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա

եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել, կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 6. Այլ պայմաններ

6.1 Պայմանագրի գործողության ընթացքում ծագած բոլոր հարցերը կարգավորվում են կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, ինչպես նաև ՀՀ Քաղ. օրենսդրության համապատասխան դրույթների:

6.2 Պայմանագիրը կազմված է հայերեն, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

6.3 Պայմանագրին կցված բոլոր փաստաթղթերը համարվում են նրա անբաժանելի մասը:

## 7. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու`

«Ծիծեռնակաբերդ»
բարեգործական հիմնադրամ
ՀՎՀՀ 02705657
Հ/Հ 1510004133600100
Բանկ `«Արարատբանկ» ՓԲԸ

Գործ. տնօրեն

Հ.Չիբչյան

Մատակարար`

«Լցոն» ՍՊԸ

ՀՎՀՀ 000057089
Հ/Հ 247290000410
ԱՇԻԲանկ ք.Մասիս

Տնօրեն

Վ.Աղջոյան



Հավելված
Մատակարարման
պայմանագրի № 25/Մ առ 26.05.2014թ.

| NN | Անվանումը | Չափ. միավոր | Քանակը | Միավորի գինը առանց ԱԱՀ | Ընդ.արժեքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ավազ լվացած | խ.մ. | 900 | 4 000 | 3 600 000 |

Պատվիրատու`
«Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ
Հ.Վ.Հ.Հ. 02705657
Հ/Հ 1510004133600100
Բանկ `«Արարատբանկ» ՓԲԸ

Գործ. տնօրեն Հ.Չիբչյան

Մատակարար`
«Լցոն» ՍՊԸ
Հ.Վ.Հ.Հ. 000057089
Հ/Հ 247290000410
ԱՇԻԲանկ ք.Մասիս

Տնօրեն Վ.Աղջոյան

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության դիտողության և առաջարկության վերաբերյալ** | |
| Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Ծիծառնակաբերդ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում հայտնում եմ.<br>1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշման նախագծի 2-րդ կետում «Գիզա» ՍՊԸ հետ կնքված գործարքի արժեքի (18308180 դրամ) և կից ներկայացված տվյալ գործարքը հիմնավորող պայմանագրի 4.1 կետում նշված արժեքի (1170000 դրամ) միջև առկա է անհամապատասխանություն, առաջարկում եմ հստակեցնել այն:<br>2. Քանի որ, կից ներկայացված «Լցոն» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրում կազմակերպության ՀՎՀՀ-ն նշված է ինը նիշով, ուստի առաջարկում եմ ճշտել այն: | Որոշման նախագծի 2-րդ կետը՝ արժեքի մասով, խմբագրվել է: Իսկ «Լցոն» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրում կազմակերպության ՀՎՀՀ-ն կնիքի վրա նշված է ութ նիշով՝ 0 0 0 5 7 0 8 9: |

*<u>ՆԱԽԱԳԻԾ</u>*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**_______ հունիսի 2014 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N Մ- 753-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**(Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի 2014 թվականի մայիսի 21-ի գրությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի -ի N 3/3.8-1/-14 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի հունիսի -ի N ԱԱ/3-4/-11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի կողմից իրականացվող «Ստեփանակերտ քաղաքի ներակառույց Սուրբ Աստվածամոր Հովանի եկեղեցու կառուցում» ծրագրի մասին» N Մ-753-Ա որոշմամբ հաստատված (2011 թվականի հեուլիսի 1-ի N Մ-539-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունը՝

- որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «2013թ դեկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «2016թ դեկտեմբերի 31-ը» բառերով.

2. Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Հր. 6/9.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

4.06.2014թ № 3/3.8-2/8394-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.05.2014թ. N 15/15.8/8173-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 22-ի N Մ-753-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու մասին (Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

034/16546-14

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

ՎՄ/3-3/6745-14 Հր. 6/8.1
05.06.2014թ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 29.05.2014թ. N15/15.8/8173-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 22-ի NՄ-753-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՄՀՄ բաժին
060 544648, 647

044/16682-14
05.06.2014թ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**մայիսի 2014 թվականի N Մ - - Ա** Nr. 6/8.2
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N Մ-1166-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 3/3.8-1/ -14 և N 3/3.8-1/ -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-172-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ) N Մ-1166-Ա որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետում «N 081/13 պայմանագրում» բառերը փոխարինել «N 084/13 պայմանագրում» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ - 1166 - Ա**
**քաղ. Երևան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-172-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի նոյեմբերի 27-ի N 3/3.8-1/18149-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 29-ի N ՎՄ/3-4/14920-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տավուշի մարզի Իջևան քաղաքում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-172-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ազատեկ» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2009 թվականի հուլիսի 31-ին կնքված N 015817 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 1,152,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Տավուշի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի սեպտեմբերի 12-ին կնքված N 09108137520 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 5,059,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ ի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2009 թվականի նոյեմբերի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 542,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2008 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված N 114198702 և 2013 թվականի մարտի 25-ին կնքված N 114198702-S7200171 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը հեռախոսալարի և ինտերնետային կապի ծառայությունների մատուցում՝ 210,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2009 թվականի հուլիսի 23-ին կնքված՝ N 10541396 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բջջային կապի ծառայությունների մատուցում՝ 500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Ֆ...ԵՇ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2013 թվականի մայիսի 17-ին կնքված N 081/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը վառելիքի մատակարարում՝ 4,040,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

02. 06. 14թ № 3/3.8-2/8300-14

Ձեր № ____________________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.05.2014թ. N 15/15.1/8103-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N Մ-1166-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

02. 06. 14թ.
№ 034/16280-14

ձր. 6/8.2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

04. 06. 14թ.
№ 41/3-3/6692-14

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 29.05.2014թ. թիվ 15/15.1/8103-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N Մ-1166-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳՄՀՄ բաժին, հեռ. 060 544648

04. 06. 14թ
№ 044/16490-14

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**
**մայիսի 2014 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

ձր. 6/8.3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N Մ-1169-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 3/3.8-1/ -14 և N 3/3.8-1/ -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-175-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ) N Մ-1169-Ա որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետում «N 081/13 պայմանագրում» բառերը փոխարինել «N 082/13 պայմանագրում» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**ՈՐՈՇՈՒՄ**
6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1169 - Ա
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-175-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի նոյեմբերի 27-ի N 3/3.8-1/18150-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 29-ի N ՎՄ/3-1/1491713 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-175-Ա ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն վճռորոշ նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Արաբկիր» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2013 թվականի հունվարի 24-ին կնքված N 008442 և «Էրեբունի» մասնաճյուղի հետ 2005 թվականի օգոստոսի 25-ին կնքված N 276397 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 1,400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված N 011.08.0127 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 2,400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2007 թվականի հունիսի 1-ին կնքված N 05-11-511 և N 07-64-34-4 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 350,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) կնքված N 116550038, 2007 թվականի ապրիլի 6-ին կնքված N 686 դիմումով, 2004 թվականի նոյեմբերի 25-ին կնքված N 010447655, 2005 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված N 010634092 և 2010 թվականի հունիսի 8-ին կնքված N 113439520 պայմանագրերում նշված գործարքները, որոնցով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 2,300,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2012 թվականի ապրիլի 10-ին կնքված N 06-1-31 և N 07-64-34-4 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 60,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2013 թվականի մայիսի 17-ին կնքված N 081/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը վառելիքի մատակարարում՝ 1,110,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

Ար. 6/8.3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

03. 06. 14թ. № 3/3.8-2/8328-14

Ձեր № ____________________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.05.2014թ. N 15/15.1/8113-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N Մ-1169-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

03. 06. 14թ.
№ 034/16324-14

---

Ար. 6/8.3

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի  Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն**
**Ֆ Ի Ն Ա Ն Ս Ն Ե Ր Ի  Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

04. 06. 14թ.
№ ՎՄ/3-3/6695-14

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 29.05.2014թ. թիվ 15/15.1/8113-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N Մ-1169-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳՎՀՄ բաժին, հեռ. 060 544648

04. 06. 14թ
№ 044/16486-14

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**մայիսի 2014 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N Մ-1170-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի -ի N 3/3.8-1/ -14 և N 3/3.8-1/ -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-177-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ) N Մ-1170-Ա որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետում «N 081/13 պայմանագրում» բառերը փոխարինել «N 083/13 պայմանագրում» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
6 դեկտեմբերի 2013 թվականի N Մ- 1170 - Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-177-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի դեկտեմբերի 2-ի N 3/3.8-1/18337-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի նոյեմբերի 29-ի N ՎՄ/3-1/14926-13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Կոտայքի մարզի Կոտայք գյուղում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-177-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Գեղամա» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2006 թվականի փետրվարի 23-ին կնքված N 317008 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրաէներգիայի մատակարարում՝ 6,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Աբովյանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 8-ին կնքված N 05108135869 պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը բնական գազի մատակարարում՝ 5,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2009 թվականի հունվարի 12-ին կնքված պայմանագրում նշված գործարքն, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2007 թվականի ապրիլի 6-ին կնքված N 686 դիմում, 2007 թվականի մարտի 29-ին կնքված N 143, 2007 թվականի նոյեմբերի 12-ին կնքված N 220035586 և 2008 թվականի նոյեմբերի 14-ին կնքված N 112873025 պայմանագրերում նշված գործարքները, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կապի ծառայությունների մատուցում՝ 1,100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի.

5) «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2013 թվականի մայիսի 17-ին կնքված N 081/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը վառելիքի մատակարարում՝ 5,250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

4/6/9.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

4/6/9.4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 226

02. 06. 14թ. №3/3.8-2/8305-14

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 29.05.2014թ. N 15/15.1/8114-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N Մ-1170-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

02. 06. 14թ.
№ 034/16272-14

դր. 6/8.4

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

04. 06. 14թ.
№ ՎՄ/3-3/6696-14

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 29.05.2014թ. թիվ 15/15.1/8114-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 6-ի N Մ-1170-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳՄՀՄ բաժին, հեռ. 060 544648

04. 06. 14թ.
№ 044/16484-14

**<u>ՆԱԽԱԳԻԾ</u>**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**հունիսի 2014 թվականի N Մ - - Ա**
**քաղ. Երևան**

դր. 6/9.5

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N Մ-453-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի 2014 թվականի հունիսի 5-ի N 3778 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի երեք համայնքներում շինարարական վերանորոգման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին N Մ-453-Ա որոշման 2-րդ կետում «(ՀՎՀՀ՝ 08417458)» բառերը փոխարինել «(ՀՎՀՀ՝ 08417459)» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**16 մայիսի 2014 թվականի N Մ- 453 -Ա**

**քաղ. Երևան**

# «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԵՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի ապրիլի 30-ի N 3/3.8-2/6628-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի ապրիլի 30-ի N 02/2871-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 5-ի N ՎՄ/3-4/5324-14 և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի 2014 թվականի մայիսի 5-ի N 01/2283-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3,482,879 դրամ ընդհանուր արժեքությամբ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի երեք համայնքներում շինարարական վերանորոգման աշխատանքների իրականացում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԵՐ-ՄՈՒՇ ՇԻՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08417458 2014 թվականի ապրիլի 14-ին կնքված N WVA/SIS ADP/CW-14/001 (RB)/FY14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 3,482,879 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ"
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի
Ծրագրի տնօրեն՝ Ժիրայր Էդիլյան

23 ապրիլի 2014թ.

"ՀՀ Սյունիքի մարզի երեք համայնքներում շինարարական վերանորոգման աշխատանքների իրականացում"

Ծրագիր

<table>
<tr><td>1</td><td>Ծրագրի նպատակը</td><td>Աջակցել ՀՀ Սյունիքի մարզի երեք համայնքների շին. վերանորոգման աշխատանքներ իրականացնելու հարցում: Մասնավորապես՝ սույն ծրագրի շրջանակներում շին. վերանորոգման աշխատանքներ են իրականացվելու Խոտ համայնքում՝ փողոցները լուսավորելու, Սալվարդ համայնքում՝ կենցաղի տան խոհանոցային պայմանները և Գորայք համայնքում գրադարանի շենքային պայմանները բարելավելու նպատակով:</td></tr>
<tr><td>2</td><td>Ծրագրի բարեգործական որակման նպատակը</td><td>Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:</td></tr>
<tr><td>3</td><td>Բարեգործը</td><td>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության Մեծ Բրիտանիայի գրասենյակ<br>հասցե՝ World Vision UK, Opal Drive, Fox Milne, Milton Keynes MK15 0ZR United Kingdom,<br>հեռ. +44 1908 841000</td></tr>
<tr><td>4</td><td>Ծրագիրը կատարողը</td><td>"Վորլդ վիժն ինթերնեշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ (հասցե՝ Երևան, Ռ.Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755).</td></tr>
<tr><td>5</td><td>Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը</td><td>Իրականացման վայրն է ՀՀ Սյունիքի մարզի Խոտ, Սալվարդ և Գորայք համայնքները:<br>Բնագավառը՝ սոցիալական</td></tr>
</table>

<table>
<tr><td>6</td><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3,482,879 (երեք միլիոն չորս հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:<br>Ֆինանսավորման աղբյուրը "Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության Մեծ Բրիտանիայի գրասենյակ.<br><table><tr><th><u>Ծախսի ուղղությունը</u></th><th><u>չափը</u></th><th><u>ժամկետը</u></th></tr><tr><td>Շին. վերանորոգման աշխատանքների իրականացում</td><td>3,482,879 ՀՀ դրամ</td><td>2014թ. երկրորդ եռամսյակ</td></tr></table></td></tr>
<tr><td>7</td><td>Բարեգործություն ստացողը</td><td>Բարեգործություն ստացող են հանդիսանում Խոտ, Սալվարդ և Գորայք համայնքները, առավելապես՝ տվյալ համայնքների երեխաները և երիտասարդները, համաձայն համայնքների կողմից ներկայացված ծրագրի առաջարկի:</td></tr>
<tr><td>8</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>14 ապրիլի 2014թ. -14 հունիսի 2014թ.</td></tr>
<tr><td>9</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td>ՀՀ Սյունիքի մարզի Խոտ համայնքում կանցկացվի փողոցների լուսավորության 420մ երկարությամբ գիծ 12 լուսատուներով, Սալվարդ համայնքում կվերանորոգվի կենցաղի տան խոհանոցը և կանցկացվի կոյուղագիծ, Գորայք համայնքում կվերանորոգվի գրադարանի տանիքը: Այդ աշխատանքները իրականացնելու համար "Վորլդ վիժն ինթերնեյշնլ" ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը մրցութային կարգով ընտրել է շինարարական կազմակերպություն և աշխատանքների իրականացման պայմանագիր է կնքել «ՀԵՐ-ՄՈՒՇ ՇԻՆ» ՍՊԸ-ի հետ, պայմանագիրը կցվում է: Աշխատանքները սկսվել են 2014թ. ապրիլի 14-ից և կավարտվեն մինչև 2014թ. հունիսի 14-ը: Ծրագրի արժեքն է 3,482,879 (երեք միլիոն չորս հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:</td></tr>
<tr><td>10</td><td>Ձեռք բերվող (Ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>ՀՀ Սյունիքի մարզի Խոտ համայնքում կանցկացվի փողոցների լուսավորության 420մ երկարությամբ գիծ 12 լուսատուներով, Սալվարդ համայնքում կվերանորոգվի կենցաղի տան խոհանոցը և կանցկացվի կոյուղագիծ, Գորայք համայնքում կվերանորոգվի գրադարանի տանիքը: Այդ աշխատանքները իրականացնելու համար "Վորլդ վիժն ինթերնեյշնլ" ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղը մրցութային կարգով ընտրել է շինարարական կազմակերպություն և «ՀԵՐ-ՄՈՒՇ ՇԻՆ» ՍՊԸ-ի հետ կնքել է աշխատանքների</td></tr>
</table>

5/10

5/10

| | | |
|---|---|---|
| | | իրականացման պայմանագիր: Ծրագրի արժեքն է 3,482,879 (երեք միլիոն չորս հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: Այդ թվում՝ ըստ համայնքների.<br><br>Խոտ համայնք 899,993 դրամ<br>Սալվարդ համայնք 895,199 դրամ<br>Գորայք համայնք 1,687,687 դրամ |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում "Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է ՀՀ Սյունիքի մարզի Խոտ, Սալվարդ և Գորայք համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Ծրագրով նախատեսված է համապատասխան աշխատանքները հանձնել վերոհիշյալ երեք համայնքների ՏԻՄ-երին՝ 15 տարվա ընթացքում դրանք չօտարելու պայմանով: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի վերահսկողությունը իրականացվում է "Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության Մեծ Բրիտանիայի գրասենյակի, ՀՀ Սյունիքի մարզի Խոտ, Սալվարդ և Գորայք համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև "Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի համապատասխան բաժինների կողմից: "Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br><br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

"Վորլդ վիժն ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար

Շաղիկ Մարուխյան

5/10

World Vision


Վորլդ Վիժն Հայաստան
Ազգային գրասենյակ
Ռոմանոս Մելիքյան 1
Երևան, 0065

Հեռ. 374 10 749 118, 749 119
Ֆաքս 374 10 749 148

www.wvarmenia.am
http://meero.worldvision.org

Armenia
National Office
R.Melikyan 1, Malatia-Sebastia
Yerevan 0065, Armenia

tel: 374 10. 749 118, 749 119
fax: 374 10. 749 148

www.wvarmenia.am
http://meero.worldvision.org


մր. 6/9.5

N 3778 /HACC

05 հունիսի 2014թ.

ՀՀ կառավարության
Բարեգործական ծրագրերի համակարգման
հանձնաժողովի նախագահ՝
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի երեք համայնքներում շինարարական վերանորոգման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին Հայաստանի Հանրապետության կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 16 մայիսի 2014 թվականի № Մ-453-Ա որոշման մեջ տեղի է ունեցել խմբագրական վրիպակ. սխալ է նշվել սույն ծրագրով նախատեսվող շինարարական աշխատանքներն իրականացնող «ՀԵՐ-ՄՈՒՇ ՇԻՆ» ՍՊԸ-ի ՀՎՀՀ-ն: Որոշման պատճենը կցվում է:

Խնդրում ենք համապատասխան որոշման մեջ կատարել անհրաժեշտ փոփոխությունը («ՀԵՐ-ՄՈՒՇ ՇԻՆ» ՍՊԸ, ՀՎՀՀ՝ 08417459):

Շնորհակալություն Ձեր համագործակցության համար:

Հարգանքով՝

1172

Ծրագրի տնօրեն
Ժիրայր Էդիլյան

ՀՀ ... ՈՒԹՅԱՆ
... 094-16798
Մուտք 05 06 14 թ.